

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Յմարագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԻՆԱ ԳԱՎՐԻԼՈՎՆԱ ՄԵՂՎԻՆԵԱՆՑԻ

Եկատերինա և Սարգիս Սահակեանցները, Միխայիլ Զասան-Չախախանը և իր որդիքը խորին ցաւակցութեամբ յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր սիրեցեալ օրը և վերջինները իրանց զորանչի և տատի

Նուճե Ալեքանդրեան, Ռուբեն Ե. Գեորգ Միքայելեան Մեղաքեանները ընտանեօր հանդերձ, խորին վշտով յայտնելով—առաջինը՝ թանգագին եղբոր, իսկ վերջինները՝ աներորդի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԷԿՍԱՆԴՐԵԱՆ ԽԱՆՈՒՏԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 23-ին Արաքսեանի ամառանոցում, խնդրում են ազգականներին և բարեկամներին մասնակցելու ամսիս 28-ին, առաւօտեան ժամը 9½-ին, Մողղու ա. Գեորգ եկեղեցու դաւթում կատարվելիք թաղման հանդիսին: Ամբիճը կը կատարվի ուրբաթ օրը 27 օգոստոսի, երեկոյեան 7 ժամին Մողղու դաւթում: Թաղումը տեղի կունենայ Սոջիկանքի հանգստարանում:

1—1

Նիխաբէր Աւետեան, Միխայիլ Ե. Նիկողայոս Ալեքանդրեան խախտեանները խորին վշտով յայտնում են—առաջինը՝ իրանց սիրեկան օրդու, իսկ վերջինները՝ եղբոր

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԷԿՍԱՆԴՐԵԱՆ ԽԱՆՈՒՏԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 23-ին Արաքսեանի ամառանոցում, խնդրում են ազգականներին և բարեկամներին մասնակցելու ամսիս 28-ին, առաւօտեան ժամը 9½-ին, Մողղու ա. Գեորգ եկեղեցու դաւթում կատարվելիք թաղման հանդիսին: Ամբիճը կը կատարվի ուրբաթ օրը, օգոստոսի 27-ին, երեկոյեան 7 ժամին, Մողղու դաւթում: Թաղումը տեղի կունենայ Սոջիկանքի հանգստարանում:

1—1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԸ ՔԱՆԳՎՈՒՄ Է

Այս է ասում է ամեն մի բռնակոթի (Չանգեղաբեր գաւառ), որին մօտենում են, ինչպէս, հարցնում են. նա պատմում է ամենօրեայ ցաւերն ու դարձերը:
Ապրում են այդ գիւղում, նայում են շուրջ ու տեսնում ցաւեր ու ցաւեր, որոնց դարման անելը շատ էլ հեշտ է: Պատճառները բազմապիսի են, որոնցից գլխաւորները կարելի է թելել: Նախ՝ չունենալով հասարակական գանձարան կամ նման օգոստէտ մի այլ հիմնարկութիւն՝ այդ գիւղը հարստահարվում է վաշխառուներին յատուկ խղճով. փողատէրերը ունեն մի մի խանութ, ուր վաճառվում են «ճօթեղեն», մանրեղեն, թէյ-շաքար և այլն, մի խօթով այն ամենը՝ ինչ հարկաւոր է գիւղացուն: Դրանք են գիւղացիները համար օրէնք դարձրած 200%-ով փող տուողները, գիւղի գրագէտ բանիմացները՝ հետեւապէս և վարիչները. այդ պարոնները բաց են թողնում իրանց խանութից ամեն բան՝ ինչ հարկաւոր է գիւղացուն, և ինչ գին իրանք ցանկանում են, այն էլ գրում են մի առանձին տետրի» մէջ: Գիւղացին միջոց ու հնարաւորութիւն չունի, նա անկարող է դժգոհելու թանգութեան դէմ, որ երբեմն կրկնակի գինն է լինում, որովհետեւ առձեռն փող չունի, որ բարդեց բերել տայ իր պիտոյները: Մի երկու ամսից յետոյ գիւղացու խանութից վերցրած իրերի գինը մուրհակ են դարձնում 200% աւելացումով: Մի որոշ տոկոս աշխատել նրանք չը գիտեն. նրանց չափը իրանց խիղճն (եթէ ի հարկէ միայն կայ այդ) է. ինչպէս թելադրում է՝ այնպէս էլ անում են:
Այս բոլորը գիտեն գիւղացիք, բայց դարձեալ յարգում են իրանց զրկողներին՝ ի

հարկէ ահամայ: Իսկապէս այս խօշտերն են կառավարում գիւղը: Եթէ իրապէս նրանք տանուտէր կամ դատաւորներ չեն, բայց այնուամենայնիւ ամեն բան նրանց ձեռքով է անցնում. առանց դրանց՝ գիւղում ոչ մի գործ չէ տեսնվում. նրանց ձեռքով է հաւաքվում հարկը, նրանք են հաշուում ու բաժանում գիւղացիների վրա գոռ ու բեգեանները. նրանց ձեռքով են կատարվում հասարակական բազմապիսի ծախսերը՝ աչքի առաջ ունենալով իրանց մեծաքանակ շահերը: Գիւղի այս աղբրութիւնները տանուտէրին ու դատաւորներին պահում են իրանց ձեռքի տակ և ծառայեցնում իրանց և նրանց շահերին: Եւ այսպիսով մասամբ բռնախալական, մասամբ էլ դրամական գործի շնորհիւ շահի գործիք դարձնելով վերոյիշեալներին՝ ամեն կերպ կեղեքում ու գրվում են ճնշված ժողովրդին: Նրանք առանց որ և է հաշուութեան գիւղացու «մէջքից դուրս են բերում» տանուտէրի ամենակարող մարդիկ միջոցով յաճախ կրկնակի հարկեր և գոռ ու բեգեաններ: Մրանց ձեռքով եղաւ նաև այս տարվայ հողաբաժինը վաշխառուներին յատուկ արդարութեամբ առաւորութեամբ բաժանելով իրանց խնամքից, ևս առաւել իրանց մէջ: Մի խօթով միւր այս բարեբաւերն են կանգնած ամեն հասարակական գործի գլուխ. նրանք են ամեն բան տեսնում, հաշուում և փակում այդ բոլորը իրանց բնահաճոյքի համաձայն: Հաշիւ տալ հասարակութեան, թէկուզ տարին մի անգամ, չը կայ այս գիւղում: Ո՛չ գիւղացիք կը պահանջեն այդ, ոչ էլ «խօշտ»-աւորները կանեն այդ երբ և իցէ: Այսպիսով բանիւլ և բանդում են այս թշուառ գիւղը և աղքատացրել են ծայրահեղ կերպով:

Մեր գիւղը 400 տուն է մօտաւորապէս և սրանցից 80%-ից էլ աւելին պարտական են այդ փողատէր—խօշտ-վարիչներին: Հարկեր, հերով կարելի է հաշիւ այնպիսիներին, որոնք ոչ մի «կէթան» չունեն. ոչ թէ միայն կով, այլ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մուկղէնում.—Ներքին Տեսչութիւն. Մա. կերտութեամբ մի հայէք. Ցարիցիների հայ գաղութը: Նամակ Սուրբմիջ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ.—Հեռագրիչներ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղը քանդվում է:

Մ Ո Ւ Կ Դ Է Ն Ո Ւ Մ

Այսօրվայ հեռագրերը հաղորդում են, որ ռուսական թնդանութները և մթերքները արագութեամբ տարվում են Մուկղէնի թէ երկաթուղու գծով և թէ ուրիշ ճանապարհով: Ռուսական զինուորային շարժում են դէպի հիւսիս:

Մանրագիտ ենք համարում տալ մի քանի տեղեկութիւններ Մուկղէնի մասին, որ քաղաքացիական տեսակէտով ամենախոշոր կէտն է Մանջուրիայում: Մեր կօզովենք «Ռուս-եապոնական օրագրութիւն» աշխատութիւնից մեր տեղեկութիւնների համար:

Ներկայումս Մուկղէնը կազմում է ռուսական վարչութեան կենտրոնը և Հեռաւոր Արևելքի փոխարքայի ժամանակաւոր բնակավայրը:

Մուկղէնը նախկին մայրաքաղաքն է այն կայսերական տոհմի, որ ներկայումս իշխում է Չինաստանում: Նա մի և նոյն ժամանակ մնում է կայսրների դամբարանների գլխաւոր կենտրոնատեղին մինչև մեր օրերը: Մուկղէնը մինչև այժմ էլ չինական ժողովրդի բերանում յայտնի է մայրաքաղաք անունով կամ չինական լեզուով «Յգին»: Նա կրում է և Շէնեան անունը:

Ներկայումս Մուկղէնը համարվում է գլխաւոր քաղաքը Մանջուրիայի երեք

նոյն իսկ մի երկու ոչխար, որ ապրուստի միակ միջոցն է գիւղացուն: Նրա երեխաները ապրում են չոր ու ցամաք, և նա ամսներով սպասում է փողի իր օգարին» որդուց կամ եղբորից, որ վերջինս փող ուղարկէ, որով կարելի լինի իւր ու պանիր դնել, եթէ միայն պարտաւոր խօշտները իսկոյն և եթ չը խլեն ողորմելու ձեռքից՝ դարձեալ թողնելով խեղճին անձաք ու վիղը ծուռ իր երեխաների մօտ:

Մեր գիւղը Բագու-Բախախանիում և Անդրերկրական երկրում մօտ 500 պանդուխտ երիտասարդ ունի, որոնք գնացել են՝ յոյս ունենալով թէ կաշխատեն, կը տան իրանց հայրերից պարտքերը և մի բան էլ կաւելացնեն ու դրանով կը դառնան գիւղ՝ եղ ու կով կտանեն և մի քիչ մարդավայել կեանք կանցկացնեն, —այսինքն կապրեն՝ վայելելով իրանց սեփական աշխատանքի արդիւնքը... բայց, աւաղ, այդ խեղճերի յոյսերը մնում են միշտ էլ յոյս: Եւ յոյսերը: 5—10 տարի օտարութեան մէջ մնալուց յետոյ՝ նրանք դատարկված են միւրապահում տուն, որովհետեւ խօշտները հօր կամ եղբոր մուրակները վերցրած գնում են պանդուխտի մօտ և այնտեղ ստանում նրանից հաղար ու մի դառնութիւններով արիւն-քրքրաւորով աշխատած կօպէկները: Հինգ—տասն տարվայ օտարականը գալիս է տուն բարոյապէս ու ֆիզիքապէս այնպիսի վիճակում և պղծում է հօր նահապետական օջախը՝ վարակելով կնոջն ու դաւաններին—յաճախ էլ ամբողջ գերդաստանը: Այդպիսի գոհեր կարելի է տանեալներով հաշիւ, որոնք բժշկվում են վայրաք «գալաքներ» ձեռքով: Այդ թշուառները երկար չեն կարողանում մնալ գիւղում. պարտաւոր դարձեալ իր փողն է ուղղում, երեխան «թացան»: Իսկ այս բոլորը անկարող է կատարել նա, ուսումն և օրից թողնում է տանը դէպի նաւթի աշխարհը... և այսպէս շարունակ...

մեծ նահանգների և իր հեղինակութեամբ հաւասար է Պէկինին:

Մուկղէնը շինված է խոնարհ գետի տափարակ հովիտում, մի արգաւանդ, բայց անտառազուրկ վայրում: Այդ նշանաւոր քաղաքը, որի մասին չինական կայսրներից մէկը, Յենյուլունը, ասել է, թէ նա նոյնն է քաղաքների շարքում, ինչ որ վիշապը և վագրը կենդանիների մէջ, պաշտպանված է ահագին պարիսպներով: Այդ պարիսպները շրջապատել են քաղաքը և ունեն տասնվեց վերատ երկարութիւն: Նրանք շինված են կաւից ու քարից, ունեն եօթուկէս ոտնաչափ բարձրութիւն: Քաղաքի անկիւններում կառուցված են աշտարակներ, որոնք կըրում են աշխարհիս կողմերի անունները: Քաղաքի կենտրոնական մասը շրջապատված է մի երկրորդական հաստ պարիսպով, որ ունի 18 ոտնաչափ հաստութիւն և 35 ոտնաչափ բարձրութիւն:

Մուկղէնը ունի կարևոր առևտրական նշանակութիւն, թէև իր սեփական արդիւնագործութիւնը մեծ չէ: Փողոցների երկու կողմերում շինված են խանութներ, որոնց առաջ առաւօտից մինչև երեկոյ խոնարհ է մարդկանց բազմութիւն:

Մուկղէնում հաշոււ են 180-ից մինչև 250 հազար բնակիչ:

Քաղաքում կան շատ նշանաւոր հուշարձաններ, կայսերական պալատ, Մախա-կալա կուռքի յայտնի արձանը, բազմաթիւ կուստոններ և ուրիշ շինութիւններ:

Ներկայ պատերազմում Մուկղէնը մինչև այժմ աւելի բարոյական դեր է կատարել, քան ռազմագիտական: Նա իր շրջակայքում աղող դիրքեր չունի երկարատեւ դիմադրութիւն ցոյց տալու համար:

Պանդուխտեան աւերածները լրացնում է մեր գիւղի երկրորդ չարիք—խմիչքի անչափ գործածութիւնը: Սմիչքը—օղին ու գինին բերվում են Նախիվանից տարեկան հաւելուքներով բերաններով և սպառվում ի հարկէ դարձեալ պանդուխտների հաշիւին: Սմիչքն մեծից մինչև փոքրը, տղամարդ՝ թէ կին... Բռնակոթի կորստեան մատուց երրորդ պահանջութիւնը բժշկի բացակայութիւնն է, որ շատ զգալի է Այս պատճառով ամեն պարագայում գիւղացին դիմում է «գալաքներին» և առատացնում նրանց հունձը: Դրանք են բժշկում սիֆիլիս ունեցողներին, (որոնցից մեծ քանակութիւն կայ մեր գիւղում), բնամաքից մեծ տանջվողներին, կանացի հիւանդութիւնները, մրսածներին, աչքացաւերը, կոյրերին... մի խօթով ամեն տեսակ հիւանդութիւնները: Այդ գալաքների բժշկութեան միակ միջոցը կեղտոտ ածելին է ու նշտարը: Դրանց գոհերի թիւը տարեկան հարիւրի է հասնում. ի հարկէ աւելի բազմաթիւ են այլանդակվածները, որոնք ամեն քայլափոխում հանդիպում են բեզ և ցաւալի սպաւորութիւն թողնում:

Այս գիւղը ունի երեք բնահայ—մէկը միւսից ազատ, համարեա անգրագէտներ. դրանք ի հարկէ ոչնչով չեն օգնում գիւղացիներին՝ ոչ գործով, ոչ օրինակով, ոչ էլ խորհուրդներով և միայն կարողանում են իրանց ողորմելու գոյութիւնը պահպանել: Նրանք չեն գիտնում նաև իրանց ձեռքից եկածն անել—նպաստել մի այլ չարիքի՝ այն է անչափանաւորի պսակվելուն: Շնորհիւ այս տղէտների, 11—13 տարեկան աղջկաները 22—28 տարեկան տղաների մարդու տալը սովորական բան է. սրա փառանքը հասկանալու անկարող են անկիրթ ծնողները, որոնք առանց խղճահարկելու ծախում են իրանց անմեղ երեխաներին սովորաբար 20 ռուբլով նաւթի աշխարհում փչացած երիտասարդներին:

Սիւնեցի

կերբին զործերի մինխաբութիւնից հա-
որշված է Բագուի նահանգապետին, որ Թա-
ւուր Կայսրը Բարձրագոյն բախինմանը է
շահասկիւղը գենըրալ-մայոր կրմա Շուշալովին
բը լիազօր խօյրեայի է ժամնախաղի դէմ
իշոցներ ձեռք աւնելու կենտրոնական համա-
ուական յանձնաժողովի կողմից Կապույն
ովի շուրջը եղած նահանգները դալու է տե-
ւական իշխանութիւնները կողմից խօյրեայի
էմ որոշված միշոցների գործադրութեան վրա
սեղելու, ամբողջ երկրի համար խօյրեայի դէմ
ուելու ընդհանուր միշոցներ որոնելու է ալիս
յս Բարձրագոյն հրամանն աչիս առաճ ունե-

նալով, Բագուի հանձնագրերը, ինչպէս ա-
սում են այսօրվայ լրագրերները, առաջադրել
է քաղաքի և բոլոր գաւառների վարչական
անձներին ամեն տեսակ օժանդակութիւն ցոյց
տալ կոսմ Շուվալովին իր վրա դրված պար-
տականութիւնները կատարելու ժամանակ:

Քուրթայի ուղղափառ հոգևոր սեմինարիան
փակվեց այս տարվայ գարնանը, իսկ նրա փո-
խարեն բացվելու են այժմ Սուլալումում առ-
աւածարանական կուրսեր: Փակված սեմի-
նարիայի սաները, ինչպէս հաղորդում են
վրաց թերթերը, տեղափոխվել են միւս 6
սեմինարիաներում, որոնց թիւում և թիֆլիսի
ուղղափառ սեմինարիան:

«Кавк. Сельское Хоз.» թերթը հաղորդում
է, որ Քուրթայի վրաց կանանց գիւղատնտե-
սական «Ծրօմա» ընկերութիւնը, որի կանոնա-
դրութիւնը նորերի հաստատվեց կառավարու-
թիւնից, ընտրել է ընկերութեան պատուաւոր
անդամ այդ թերթի խմբագիր պ. Աղէքսանդր
Քալանթարին և կովկասեան Գիւղատնտեսա-
կան ընկերութեան քարտուղար պ. Ի. Իսսե-
կանուն:

Կանանց բժշկական ինստիտուտը, ինչպէս
հաղորդում է «Р. В.» լրագրերը, այս տարի
տուել են 970 խնդիր: Այդքան խնդրատուե-
րից ընդունվել են միմիայն 250 օրորդներ,
այսինքն 1/4-ը միայն, իսկ մնացած 3/4 մասը
մնացել են բաց:

ԿԱՂԱՌԱՆԻՑ մեղ գրում են. «Օգոստոսի
16-ի գիշերը այստեղից 8 վերստ հեռու գը-
տնվող Լարսի վրայ գիւղի «բոստաններում» մի
չարագործութիւն կատարվեց: 17-ի առաւո-
տեան յիշեալ գիւղի բնակիչ երեք հայ երի-
տասարդների խնդրված գտան իրանց բոս-
տանների մօտ: Չարագործները ամեն մէկին
առանձին-առանձին բռնել են դեռևս քնած ժա-
մանակ—և, բերանները աւազ լցնելով՝ խեղ-
դել են: Տեսարանը սոսկալի էր. դժբաղդ գո-
հերի բերաններից այնքան աւազ էին կոխ
տուել փայտիկ, որ համ շրթունքներն էին
պատարվել, համ էլ մինչև ստամոքսները ա-
ւազով լցվել: Եղեռնագործութեան մասին դա-
նազան կարծիք կայ ժողովրդի մէջ»:

Սուրբաբուի գաւառի ՄՈՒՐՇՈՒԴ-ԱԼԻ գիւ-
ղից մեղ գրում են. «Պարսկական տի-
րապետութեան ժամանակ՝ Նաշաֆալի և
Լազու-Ղալա գիւղերը շինված են միմանց
մօտ: (Օտարականը մէկ գիւղ կը կարծի):
Այս երկու գիւղերում հայ և թուրք ազգա-
բնակութիւնն ապրում է խառն: Նաշաֆա-
լի գիւղի հանդպարը (ղուտուղի) դաշտում
ընդհարվում է նոյն գիւղացի մի թուրք երի-
տասարդի հետ: Վերջինս գալով գիւղ, յայտ-
նում է իր թուրք զբայիներին դէպքի մասին.
Թուրքերը իսկոյն գէշը են վեր առնում և
շտապում գիւղամէջ, որտեղ ժողոված են լի-
նում հայերը. նրանց հետևում են ոչ միայն
Լազու-Ղալա գիւղի թուրքերը, այլ և իսկոյն
և եթ օգնութեան են գալիս մօտակալ թուր-
քաբնակ գիւղերից: Նախ սկսվում է երկու
կողմից ևս սպառնական բանակում, որը շու-
տով պետք է փոխվէր դէմքի, եթէ մի քանի
անձնաւորութիւնները միջամտութիւնը չը լի-
նէր: Սըման կանխատեսելով դէպքի ծայրա-
յեղութիւնը և վատ հետևանքը, իսկոյն միջ-
նորում են երկու կողմերին ևս վերջ տալ
անմիտ և քայքայիչ վայրագութիւններին: Ա-
ջղովում է դադարեցնել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԳՐՈՒ ԵՐՈՐԶԸ

Գեներալ Լիեմիլը գնում է Կուրայակից
օգնութեան: Պետերբուրգից հեռագրում են անդ-
լիական լրագրերներին, թէ գեներալ Լիեմիլը
արդէն հիւսիսից շարժվել է և գնում է գեներ-
ալ Կուրայակից օգնութեան: Ենթադրում
են, որ մինչև Լեւոսեան նա կարող է հասնել
10 օրում: (Р. Լ.)

Պորտ-Արտուր օգնութիւն կը ստանայ մի ամիսից
լիսոյ: «Matin» լրագրի Զիֆուի թղթակիցը
հաւատարմում է, որ նա կարողացել է իմա-
նալ ամենատոյգ աղբիւրից, թէ գեներալ Կու-
րայակից տեղեկացրել է Պորտ-Արտուրից
ներին, որ նրանք մի ամիս էլ դիմանան: Մինչ-
և մի ամիս, ասել է նա իբր, նրա ոյժերը
կաճեն և կը հասնեն կէս միլիոն մարդի, և
նա այդ ժամանակ կը հասնէ բերդի օգնու-
թեան ու կազմուէ նրան: Այդպիսի խրախու-

սիչ պատգամ տանող էմիսարը հասաւ Պորտ-
Արտուր ջոնկայով և ապա վերադարձաւ Զիֆու:
«Նօվիկ» նաւէ էկիպաժը, որ եկել է Վա-
դիօստով, պատմել է, թէ գեներալ Սոսսուելը
իր տրամադրութեան ներքոյ ունի մինչև
1,800,000 հատ պերօկսիլինեան փամփուշտ,
որոնցով նա կարող է օղը թռցնել ամբողջ
Պորտ-Արտուրը, երբ անձնատուր լինելու
պէտք լինի: (Р. Լ.)

Եւրոպացիները համար դրամ ստնդ հաւեր:
Զիֆուից հեռագրում են, թէ «Indépendant»
լրագրում, որ ռուստ էր տանում եւրոպա-
կան զօրքերի համար դէպի Շուան սարերը,
կալանաւորվեց մաքսային պաշտօնեաների կող-
մից, որոնք հաստատում էին, որ եթէ շոգե-
նաւը գնայ, դրանով կը խախտվի Զինատա-
նի չէզոքութիւնը: Հիմա կայ կարծիք, որ այդ
լրագրում տանում էր մի մեծ գումար, մօտ
100 միլիոն փող, որ սահմանված էր Կուրո-
կի զօրքերի ուժեղ վճարելու համար: Օգոս-
տոսի 17-ին, երկուշաբթի 10-ին, Դալ-
նիցիս պաշտ Զիֆու մի հակալակնանաւ, որ
տարաւ բոլոր զբաղները, թողնելով միայն
30,000: (Рос.)

Եւրոպացիները «Temps» լրագրի
պատերազմական ընտաղատ Բերնէ ուղադ-
րութիւն է դարձնում այն հանգամանքի վրա,
որ եւրոպացիները Լեւոսեանը գրաւեցին առ-
դէն շատ ուշ և դրա պատճառը ոչ թէ ուս-
ների ցոյց տուած դիմադրութիւնն էր, որքան
իրանք եւրոպացիներն էին, այսինքն նրանց
անվճարակաւութիւնը և անհետադարձութիւ-
նը գործողութիւնների մէջ: Եւրոպացիները
ցոյց չը տուեցին որ և է նշանաւոր ռազմա-
գիտական նախաձեռնութիւն: Փոխանակ մի-
լաւ մշակված ծրագրի, նրանք կազմել էին մի
քանի մասնաւոր ծրագրեր: Այդ ծրագրեր-
ներից առաջինի համաձայն երեք զօրքաւակ-
ներ պէտք է հասնէին 129-րդ օրը: Զորքերը
զօրքաւակները պէտք է գրաւէ Կորէին և մի
զօրքաւակին ևս ուղարկել Պորտ-Արտուրի պա-
շարման համար:

Այդ պէտք իր հիմքն ունէր, որովհետեւ այդ
ժամանակ Պորտ-Արտուրում ունեւոր ունէին միայն
50,000 զօրք: Այդ ժամանակ շատ հեշտ էր
շարժել ռուսաց զօրքը և ապա վերցնել Պորտ-
Արտուրը: Առհասարակ այդ պահը շատ լուրջ
էր և հեշտ իրագործելի: Բայց ինչպէս նա չի-
րագործվեց: Առաջին նրա համար, որ կուրը
սկսվեց փետրվարի 28-ին, փոխանակ սկսվե-
լու մի ամիս առաջ, ինչպէս ենթադրվում էր:
Ծովը դեռ ծածկված էր սառույցով: Երկրորդ,
արգելք էր հանդիսանում ռուսաց նաւատորմի
երկրկու: Ուստի սկզբնական ծրագիրը փո-
խարինվեց նոր ծրագրով, որի հիմք ծառայում
էր այն, որ ռուսաց զօրքի մի մասը գրաւեն
դէպի Պորտ-Արտուր (ճակատամարտ Կինչ-
ժուի մօտ): Ասկայն այդ ծրագրի իրագոր-
ծումը տարաւ եւրոպացիներին դէպի երկրոր-
դական նպատակ—դէպի Պորտ-Արտուր և
ստիպեց յետաձգել գլխաւոր նպատակը—հա-
րուած հասցնել ռուսաց զօրքին: Վերջին ծրա-
գիրն էր երեք բանակների միացումը Լեւո-
սեանի ճանապարհի վրա: Նա շատ զանազաղ
կատարվեց: Միացումը տեղի ունեցաւ մասամբ
Այսպիսի մօտ միայն յուլիսի 10-ին (ն. տ.)
և, վերջապէս, ինչպէս մօտ յուլիսի 24-ին:
Ուստի գրաւումից յետոյ եւրոպական երեք
բանակները շարժողութեան մէջ յապագային
եղաւ: Այդ ժամանակ եւրոպացիները յոյս ու-
նէին վերցնել Պորտ-Արտուրը և միայն օգոս-
տոսի 11-ին (24), երբ յայտնի եղաւ անաշո-
ղութիւնը Պորտ-Արտուրի մօտ, եւրոպացիներ-
ը որոշեցին գործել Լեւոսեանի դէմ: Ժամա-
նակը գործում էր եւրոպացիների դէմ, բայց
պատերազմում երեք բան թանգագին են, ինչ-
պէս ասում էր Սուվորովը—գրամը, աւելի
թանգ է մարդկային կեանքը և ամենաթանգա-
գին է—ժամանակը: Եթէ ռուսները շուտ մո-
ռացան Սուվորովի այդ կանոնը, եւրոպացի-
ները ևս աւաւել փորձով տեսան, թէ ինչ է
նշանակում չը հետնել այդ կանոնին: (Ноб.)

Գեներալ Կուրայակիցի ռազմագիտական
պլանը: Ֆրանսիական մի քանի թղթակիցներ
և պատերազմական ընտաղատներ, որոնց թիւում
Մարսելի Գիւստին, վերագրում են գեներալ
Կուրայակիցին այսպիսի պլան—թողնել
Լեւոսեանում 30,000 զօրք, որ սա եւրոպացի-
ների առաջխաղացութեան առաջը պահէ,
իսկ ինքն իր բանակով հեռանալ դէպի Սու-
դէն: Գլխաւոր հրամանատարը չէ ուղղում իր
բանակը վտանգի ենթարկել Լեւոսեանի հա-
մար: (Ноб.)

Թէ ինչպէս Ռուսաստանը կամենում է անգլոս-
աւալ յաղթել: Վերջերս անգլիական մամուլը
սկսել է շատ խօսել հաշտութեան մասին, այդ

հանգամանքը զայրոյթ է պատճառել «Новое
Время» լրագրի խմբագիր Սուվորովին, որ հե-
տեալ նկատողութիւններն է անում.

«Յօռում են հաշտութեան մասին: Անգլիա-
կան լրագրերները առանձին հաճոյքով, խառն
չարախնդութեամբ, խորհուրդ են տալիս Ռու-
սաստանին հաշտութիւն կնքել: Նոյն իսկ մար-
գարէանում են, որ հաշտութիւնը շատ էլ ան-
պատուաբեր չի լինի: Ի հարկէ, ասում են
նրանք,—ստորագրում կը լինի, որովհետեւ Ռու-
սաստանի հեղինակութիւնը սաստիկ կընկնի,
բայց չէ որ հաշտութեան հետ կը գայ նոր
կեանքի արշալոյս... և սպառազինութիւն, ան-
վերջ սպառազինութիւն:

«Այդ պատճառով թոյլ կը տամ ինձ առաջ
բերել այն տողերը, որ դեռ մարտի 4-ին
տպեցի:

«Ռուսաստանը ամենից առաջ պէտք է յաղ-
թէ այս պատերազմում, ինչ գնով և լինի: Նա
կարող էր չը յաղթել Սեւաստօպոլում, կարող
էր չը յաղթել Թիւրքային 1878 թ.: Այդ բո-
լորը ծանր էր և կարող էր ծանր լինել: Բայց
այնտեղ մենք ամբողջ մեր նշանակութիւնը
ծանր վտանգի չէինք ենթարկել, իբրեւ
մի մեծ և քաղաքակիրթ պետութեան նշանա-
կութիւն: Իսկ այժմ մենք դրել ենք. Կամ
մենք, իսկապէս, մեծ պետութիւն ենք, որ
զուր տեղ չենք ձգտում Ասիա՝ մեր կուլտու-
րական նպատակների համար, զուր տեղ չենք
սպառում մենք մեր ժողովրդի ոյժերը և զրամ-
ները, յոյս դնելով նրա զօրացման և ռուսա-
կան մտքի իշխանութեան վրա, կամ այդ մի
տեսակ խոր-տրագիական թիւրիմացութիւն
էր, իսկ քաղաքակիրթ աշխարհի կարծիքով
տրագի-կոմիքական ֆատում էր, արժանի ծի-
ծաղի: Ահա ինչ ճակատագրային խնդիր կայ
մեր առաջ:

«Կամ մենք կը յաղթենք և կը յաղթենք ու-
րեմն ոչ միայն Եւրոպային, այլ վերջնական-
նապէս կը յաղթենք բոլոր այն երկրները, որ
մենք ձեռք ենք բերել երկու դարերի ընթաց-
քում, կը յաղթենք Եւրոպայի նախապաշա-
րուկները Ռուսաստանի վերաբերմամբ, կամ
մենք կը յաղթվենք և ուրեմն յաղթված կը
լինենք ժողովրդի աշխարհի համար, Թիւրքային
համար, Կովկասի համար, մեր միջին-ասիական
երկրներին համար, Բալկանեան թերակղզու
վրա ունեցած ազդեցութեան համար, ամբողջ
պաւ աշխարհի համար:

«Ահա ինչպէս կը լինի այդ... Կամ մեր գո-
յութիւնը, կամ ստորացման սարսափը: Ինչ
ուզում էք ասացէք, բայց աշխարհը սիրում է
կոխ և յաղթութիւն և վայր եկել տարել է
յաղթվածներին» (Ноб. Время)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐԸ

25 օգոստոսի

ՄՈՒԿԻՆԷՆ, 24 օգոստոսի: (Բէյտէր): Եւրո-
պացիները գնդակահար են անում ամբողջ օր-
վայ ընթացքում գնացող զօրքերին այն բլուր-
ներէն, որոնք գտնվում են ճանապարհից դէպի
արեւելք: Օգոստոսի 23-ին գիշերը եւրոպա-
կան հետեակ զօրքը յարձակում գործեց ռու-
սական ինֆանտերիայի մեծ մասի վրա: Ռու-
սական արտիլլերիան կանգնում է բլուրների
վրա զուգահեռաբար եւրոպական զօրքերի
գծին և պաշտպանում է ռուսաց զօրքերի յետ
նահանջիւր գիծը: Թնդանութիւնը և սրանս-
պօրտները մտնում են Սուվորով ճանապարհով
և երկաթուղիական գծով: Զանապարհները
սարսափելի դրութեան մէջ են: Տեղատարափ
անձրև է գալիս ամբողջ օրը: Ռուսական զօրքի
գլխաւոր ոյժերը առաջ են գնում դէպի հիւ-
սիս:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 25 օգոստոսի: (Բէյտէր): Տա-
կոմից, Վաշինգտոնի նահանգ, հաղորդում են,
որ այնտեղի էկսպորտէրները ծանուցում ասա-
ցան, որ եւրոպական ջրերն ուղարկվող ալիւ-
րի մի տոկոսակի վրա մաքսահարկը մեծա-
ցրված է 10 ցենտով պատերազմի պատճառով:

ԵԱԼՏԱ, 25 օգոստոսի: Երկարատեւ չորու-
թիւնից յետոյ հարաւային ափի վրա եկան
յորդառատ անձրևներ: Ուղղով սկզբում ան-
ցնալ տարվալից աւելի բազմաթիւ ջր է ծառ-
կարժանի վախճանվեց Եւրոպայի նաւահանգստի
հրամանատարը:

ՆԻՇՆԵՆ-ՆՈՎՈՎՐՈՒՄ, 25 օգոստոսի: Տօնա-
վածաւր փակվեց: Առեւտրական շրջանառու-
թեան գումարը ընդհանրապէս անցնող տար-
վանից 200%-ով պակաս էր: Դիչ ապրանքները
անցան առանց մնացորդի: Բողոքող մուրհակ-
ների գումարը առավելագույն մեծացել է:

ՄԻՆՍԿ, 25 օգոստոսի: Նշմանի մօտ գտն-
վել են երկու նոր երկաթխառն աղբիւրներ:

ՍԼԱՎԵԱՆՍԿ: Զրերի սեղօնը աւարտված է:
Եկողների թիւը հաւասար էր անցեալ տար-
վայ թիւին:

ԿԻԵՎ, 25 օգոստոսի: Կիեւի փոխադարձ
կրէդիտի ընկերութեան խորհուրդը Կարմիր
խաչի Կիեւի վարչութեան դրամարկղը մրտց-
րեց 75,000 ռ., որից 25,000 ռ. ի նպաստ
վերաւորների և հիւանդների Հեռաւոր Արե-
ւելքում, 25,000 ռ. նպաստներ տալու զինու-
րականների ընտանիքներին և 25,000 ռ.
բժշկներին և սանիտարական խմբի անդամ-
ների ընտանիքներին:

ԼՕՆԴՈՆ, 24 օգոստոսի: (Բէյտէր): Պաշտօ-
նական լրագրերը հաղորդում են, որ Թագաւորը
շնորհեց Վիկտորիա շքանշանի արքայական
շղթան ռուսաց և աւստրիական կայսրներին:

ՆՈՎՈՐՈՍԻՍԿ, 25 օգոստոսի: Կայացաւ
այգետէրների և գինեգործների ընկերակցու-
թեան պահեստների հիմնադրութիւնը, որոնք
կառուցվում են չէրնոմորեան գինիները միաց-
նելու և պահպանելու համար: Միջոցներ տըր-
ված են մէլիօրատելի գումարից: Պահեստաւո-
նը 30,000 վեդրօի համար է:

26 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օգոստոսի 25-ին պաշտօնա-
կան տեղեկութիւններ Հեռաւոր Արեւելքից չեն
ստացված:

ԶԻՖՈՒ: Օգոստոսի 25-ին (Բէյտէր) գործա-
կալութիւն: Ինչպէս հաղորդում են չինացի-
ները, Պորտ-Արտուրի մօտ տեղի էին ունե-
նում կռիւներ օգոստոսի 14-ից մինչև 18-ը:
Առաջին երկու օրերի ընթացքում կուրը կա-
տաղի էր, իսկ վերջին երկու օրվայ մէջ եւ-
րոպացիները միայն յամառութեամբ պաշտ-
պանում էին գրաւած դիրքերը: Վերջինները
այնքան կարեւոր են, որ նրանց յետ առնելու
համար՝ ռուսները զոհում էին բերդի պաշտ-
պանների այնքան թանգագին կեանքը, ըստ
ամենայն կարգի կուր մէջ մտնելով թշնամու
հետ: Օգոստոսի 18-ին եւրոպացիները յետ
նահանջիցին համարեա բոլոր դիրքերից: Ռու-
սական խուզարկուների մի փոքրիկ խումբ
Պաշինջուանից անցաւ և հասաւ մինչև Շու-
շիւն, չը հանդիպելով եւրոպացիներին: Օգոս-
տոսի 17-ի գիշերը, վերապահական, խուզար-
կուները գտան այն դիրքերում, որոնք առաջ
գրաւված էին թշնամուց, մի եւրոպացու, որ
վայր դեցեց հրացանը և փախաւ: Ռուսները
գրաւեցին այդտեղ գնացան գործիքներ, բայց
նկատելով, որ նշանաւոր թիւով եւրոպացիներ
գտնվում են թնդանութիւնը շարքերի հետևում,
արագութեամբ վերադարձան բերդը: Ուղադ-
կուների մի ուրիշ խումբ հաւատարացաւ, որ
եւրոպական հողապատնէների առաջին շար-
քը գրաւված չէ թշնամուց, ապա նա հանդի-
պեց եւրոպական մի վաշտի, որի հետ կռիւ
սկսեց. շատ եւրոպացիներ, յանդիմանալով բռն-
վելով. կոտորվեցին, իսկ միւսները յետ նա-
հանջիցին:

ԼՕՆԴՈՆ, (Բէյտէր): Կորէական ներկայա-
ցուցիչը Լօնդոնում «Բէյտէր» գործակալու-
թեան» ներկայացուցչի հետ խօսելու երգի-
ծանքով վերաբերվեց այն ենթադրութեանը,
որ իբր թէ Կորէայի և Եւրոպայի միջև կապ-
ված համաձայնութիւնը հաւասարազօր է եւ-
րոպական խնամակալութեան: Անհրաժեշտ հա-
մարվեց, որ Կորէայում լինի մի օտարերկրեայ
խորհրդակցական ֆինանսական մասում. ճիշտ
նոյն տեսակի միջոց է համարվում և դիպլոմա-
տիական մասում մի օտար ներկայացուցիչ
ունենալը:

ԶԻՖՈՒ օգ. 26 (Բէյտէր): Զինական կառու-
վարութիւնը Յիլինգփու նաւահանգիստը, որ
գտնվում է Պէկինից և Նիւ-Չժուան գլխաւոր
ճանապարհի վրա, յայտարարեց բացված հա-
մաշխարհային առևտուրի համար:

ՏԻԱՆՅՈՒՆ, օգ. 26-ին (Բէյտէր): Միակ
մարտկոցները, որ եւրոպացիները գրաւել են
Պորտ-Արտուրի մօտ Շակալաւանի մօտի
երկու մարտկոցները և Աղաւառ խորշից ու
Լեւոսեանի փարոսից, հիւսիս եղած դաշտա-
յին մարտկոցները: Եւրոպացիների արտիլ-
լերայի գլխաւոր դիրքերը գտնվում են Գայիւան
լեռների վրա:

ԶԻՖՈՒ, օգ. 22-ին (Բէյտէր): Կօնտր-ժողա-
պետ Ուրիլան հրամանը ստացաւ իր Եւրոպա-
յով մնալ Շանգայի դիմացը մինչև Պորտ-Ար-
տուրի տնտեսաւոր լինելը:

ԼՕՆԴՈՆ, օգ. 26-ին (Բէյտէր): «Բէյտէրի
Գործակալութեան» թղթակիցը Կուրօկի բա-
նակում հաստատում է, որ Անալին վրա յար-
ձակված ժամանակը եւրոպական կենտրոնա-
կան բանակի կորուստները սաստիկ ծանր
էին: մի բաւաւրիւն բողոքովն ոչնչացրվել է
ալ թիւի վրա եւրոպացիներն ունեցան մեծ
ալոտութիւն. ռուսները չը փորձեցին հակա-

